



ԱՄԵՆ ԻՆՉ ՈՐՈՇՎՈՒՄ Է ՄԱՆԿԱՊԱՐՏԵՋԻՑ ԱՌԱՋ ԿԱՄ ԻՆՉՊԵՍ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼ ԵՐԵԽԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀԻՆ

*Մասարու Իբուկայի «Մանկապարտեզը շափ ուշ է» գրքի
հիմնական գաղափարների ամփոփում*



Եթե դուք փնտրում եք հստակ կանոններ կամ բաղադրատոմսեր՝ ինչպես ճիշտ կրթել և դաստիարակել երեխային, ապա իզուր ջանք եք գործադրում, այդպիսի բաղադրատոմսեր չկան: Յուրաքանչյուր ծնող պետք է ընտրի երեխայի դաստիարակության իր սեփական ոճը՝ կախված երեխայի կարողություններից և առանձնահատկություններից: Սակայն կան մի քանի խորհուրդներ, որոնց պետք է ուշադրություն դարձնի յուրաքանչյուր ծնող և որոնք օգտակար կլինեն երեխայի զարգացման համար:

- 1. Յուրաքանչյուր երեխա կարող է սովորել: Ամեն ինչ կախված է ուսուցման մեթոդից:** Մեծահասակները կարող են շատ ջանք թափել ինչ-որ նոր բան սովորելու համար, բայց սպասված արդյունքը չստանան, իսկ երեխան կարող է հասնել հաջողության ամեն ինչում: Եկեք նայենք մինչև 3 տարեկան երեխաներին: Նրանք շատ կարճ ժամանակում արագ զարգանում են: Մինչև մեկ տարեկան երեխաները կարող են լողալ: Երեխային լողալ սովորեցնելը նույն բանն է, ինչ նրան քայլել սովորեցնելը: Նրանք սովորում են քայլել և խոսել, և միաժամանակ՝ կարող են հեշտությամբ սովորել որևէ օտար լեզու կամ նվագել որևէ գործիքի վրա: Հիշում եք, թե ինչ էր կատարվում ձեզ հետ մեկ կամ երկու տարեկան հասակում: Ձեր 90%-ը կպատասխանի՝ «ոչ»: Որպես կանոն, մեր բոլոր հիշողությունները ավելի ուշ տարիքից են: Բայց կա



մի զարմանալի փաստ. եթե ձեր մանկության տարիներին սովորած լինեիք մի քանի լեզուներ, իսկ հետո օգտագործեիք դրանցից միայն մեկը, հավանաբար կհիշեիք ձեր սովորած օտար լեզուները, եթե հայտնվեիք այդ լեզուներով խոսողների մեջ: Դուք պետք է ձեր երեխային հնարավորինս շատ հմտություններ և գիտելիքներ տաք, քանի որ հետագայում այդ հմտությունները շատ օգտակար կլինեն նրա համար:

2. Մինչև 3 տարեկան երեխայի փորձը հիմք է հանդիսանում նրա մտավոր կարողությունների զարգացման համար:

Որպես կանոն, ծնողները կարծում են, որ երեխայի զարգացման լավագույն ժամանակը սկսվում է 3 տարեկանից հետո, սակայն, ըստ Մասարու Իբուկայի, դա արդեն ուշ է: Գլխուղեղի կառուցվածքը ձևավորվում է մինչև 3 տարեկան հասակը: Դա չի նշանակում, որ 3 տարեկանից հետո երեխայի զարգացման և դաստիարակության համար օգուտ չկա, բայց անհրաժեշտ է սկսել նրա զարգացումը մինչև այս տարիքը:



3. Ի՞նչ կարող է անել փոքր երեխան:

Փոքրիկներն ունեն օբյեկտները ասոցիացիաներով տարբերելու շնորհ, ուստի անհրաժեշտ է նրանց սովորեցնելիս օգտագործել պատկերներ: Փոքրիկ երեխայի համար դժվար է հասկանալ, թե որն է «9» թիվը, բայց նա հեշտությամբ կարող է հիշել այն «ընձուղտի» և «աղվեսի» միջոցով: Երեխաները նույնիսկ կարողանում են անգիր անել ուղղագրությունը: Հետազոտությունները ցույց են տվել, որ հինգ ամսական երեխան կարող է երաժշտական նախասիրություններ ունենալ: Երեխաները հատկապես լավ են ընկալում դասական երաժշտությունը:



2

4. Երեխային շրջապատող մարդիկ վճռական դեր են խաղում նրա զարգացման գործում:

Մարդիկ, որոնց հետ երեխան շփվում է՝ որոշիչ դեր են խաղում երեխայի զարգացման գործում, մինչդեռ գեները երկրորդական նշանակություն ունեն: Եթե ծնողները բժիշկ են, դա չի նշանակում, որ նրանց երեխան նույնպես բժիշկ կդառնա: Ծնողների զբաղմունքը և կարողություններն ուղղակիորեն չեն ազդում իրենց երեխայի ապագայի վրա: Շատ հաճախ ծնողները կարծում են, որ ամեն ինչ կախված է գեներից: Օրինակ, եթե ծնողները մարզիկներ են, նրանք կարծում են, որ իրենց երեխան նույնպես պետք է մարզիկ դառնա, բայց դա չի լինի, եթե նրանք չզարգացնեն սպորտի և շարժման նկատմամբ երեխայի ձգտումը: Ավելի քիչ սպորտային ներուժ ունեցող երեխաները կարող են ավելիին հասնել, եթե մեծանալով զբաղվեն սպորտով:



Մենք կարծում ենք, որ վաղ հասակում երեխան ոչինչ չի հասկանում, և այդ պատճառով մենք կարող ենք նրա կողքին որևէ բան ասել կամ անել, ինչը սխալ է: Երեխաները ենթագիտակցորեն հասկանում են ամեն ինչ, և երբ մեծանան, նրանք կվերարտադրեն այդ բառերն ու վարքը: Ահա թե ինչու, երբ ծնողները «վատ լեզու» են օգտագործում, զարմանալի չէ, որ երեխան նույնպես սկսում է կիրառել այն:

Սովորաբար, եթե երեխան հետ է մնում զարգացման մեջ, ծնողները չեն փորձում զարգացնել նրա հմտություններն ու փաղանդները: Նրանք կարծում են, որ կարդալ և գրել սովորելը բավական բարդ կլինի իրենց երեխայի համար, սակայն պրոֆեսոր Շինիշի Սուզուկիի փորձը ցույց տվեց, որ նույնիսկ զարգացման մեջ հետ մնացող երեխաները կարող են լավ կրթություն ստանալ:

5. **Երեխաները, ովքեր շրջապատված են վառ գույներով ու հնչյունների բազմազանությամբ, շատ ավելի արագ են զարգանում, քան այն երեխաները, ովքեր միշտ մնում են տանը:** Եթե կարծում եք, որ երեխաները պետք է ապրեն շատ անաղմուկ և հանգիստ մթնոլորտում, առանց իրենց սենյակում վառ գույների կամ բարձր ձայների, ապա՝ դուք խանգարում եք ձեր երեխային զարգանալ: Ապացուցված է, որ վառ գույներով և տարբեր աղմուկներով շրջապատված երեխաները շատ ավելի արագ են զարգանում, քան նրանք, ովքեր միշտ մնում են տանը:



6. **Մոր և հոր ներդաշնակ հարաբերությունները:** Երեխայի զարգացման հիմնական կանոններից մեկը մոր և հոր ներդաշնակ հարաբերություններն են: Դուք կարող եք մտածել, որ ձեր երեխան շատ փոքր է և ոչինչ չի հասկանում: Այս կարծիքի մեջ կա որոշ ճշմարտություն. երեխան չի հասկանում

բառերը, բայց ենթագիտակցորեն զգում է ինչ-որ բացասական էներգիա, որը կարող է շատ վնասակար լինել նրա համար:

7. Հոր դերը պետք է լինի նույնքան կարևոր, որքան մոր դերը:

Հայրը պետք է մոր հետ լինի նույն հարթության վրա: Որպես կանոն, մայրն ավելի մեծ մասնակցություն է ունենում երեխայի դաստիարակության գործընթացում, բայց երեխան ունի ինչպես մայրիկի, այնպես էլ հայրիկի կարիք: Ահա թե ինչու պետք է ջանքեր գործադրեք՝ ապահովելու ընտանիքի բոլոր անդամների լիարժեք փոխազդեցությունը:



8. Ձեր երեխայի զարգացման համար կարևոր կլինի, եթե հաճախ գրկեք և խոսեք նրա հետ որքան հնարավոր է շատ:

Կա կարծիք, որ եթե ծնողը երեխային անընդհատ իր գրկում է պահում, ապա նա սկսում է լացի միջոցով ստանալ այն ամենը, ինչ ուզում է: Բայց երեխայի համար կարող է ավելի վնասակար լինել, եթե նրան մենակ թողնեք իր խնդրի հետ: Որքան հաճախ եք երեխային գրկում, այնքան ավելի մեծ է հավանականությունը, որ նա կդառնա ապրումակցող անձնավորություն:



Կա ևս մեկ նախապաշարմունք, որ երեխայի հետ քնելը վատ է, քանի որ այդ դեպքում խնդիր կդառնա նրան ձեր մահճակալից հեռացնելը: Բայց, մյուս կողմից, ծանր օրվանից հետո երեխային ձեր մահճակալին պառկեցնելը և միասին քնելը կարող է ոչ միայն հանգստացնել ձեզ և ձեր երեխային, այլև օգնել երկուսիդ միջև սերտ հուզական կապի հաստատմանը:


9. Երեխաները պետք է շփվեն այլ երեխաների հետ:

Երեխաները պետք է շփվեն միմյանց հետ: Շփումը և հաղորդակցումը շատ կարևոր է ինչպես երեխաների, այնպես էլ մեծահասակների համար: Երեխաները սկսում են հասկանալ մարդկանց՝ խաղալով և զրուցելով երեխաների հետ: Թույլ տվեք ձեր երեխային շփվել և զարգանալ այլ երեխաների հետ: Դա նրան մեծ հաճույք կպատճառի և նաև շատ օգտակար կլինի:




10. Վեճերը երեխայի առաջին փորձն են սոցիալական խմբում:

Հաճախ երեխաները վիճում են խաղալիքների, ճոճանակի կամ այլ առարկաների պատճառով: Վիճաբանությունները կարող են սովորեցնել ձեր երեխային պնդել իր պահանջները կամ փոխզիջումների գնալ: Առանց պատճառի վեճ չի լինում: Չարժեք քննադատել երեխային ինչ-որ մեկի հետ վիճելու համար: Սա



պարզապես փորձ է, առանց որի նա կարող է դառնալ պարփակված մարդ, որը խուսափում է շփումից:

11. **Հնարավորինս շատ խոսեք ձեր երեխայի հետ:** Գիտափորձը ցույց է տվել, որ օրական նույնիսկ մեկ ժամ երեխայի հետ խոսելն օգնում է նրան ավելի շուտ խոսել: Այսպիսով, որքան շատ եք խոսում ձեր երեխայի հետ, այնքան ավելի արագ եք դրական արդյունքների հասնում:



12. **Երեխայի երևակայությունը զարգացնում է նրա ստեղծագործելու ունակությունը:** Տվեք երեխային երևակայության ազատություն և մի պարտադրեք նրան ձեր սեփական գաղափարները: Սա ստեղծագործ անհատականություն ձևավորելու կարևոր պայման է:

13. **Ծնողները չպետք է կատակեն երեխայի խոսքի հետ կապված:** Նույնիսկ եթե կարծում եք, որ երեխան չի հասկանում տվյալ լեզուն, դուք չպետք է դա անեք: Երեխան հասկանում է ամեն ինչ, պարզապես նրա արտաբերական օրգանները չեն կարողանում ճիշտ արտասանել բառերը:



14. **Պետք է շատ զգույշ լինել գովասանքի և պատժի հարցում:** Երեխան վաղ տարիքում չի հասկանում, թե ինչն է վատ և ինչը՝ լավ: Նրա համար լավն այն է, երբ իրեն գովում են, իսկ վատն այն է, երբ պատժում են: Փոքր երեխան չի հասկանում պատճառները, թե ինչու են իրեն քննադատում, բայց քննադատությունը բացասական հույզեր է առաջացնում: Մեծահասակները ստիպում են երեխաներին տարբերել լավն ու վատը: Ձեր երեխայի կարողությունները կզարգանան՝ կախված նրանից, թե ինչպես դուք կգովեք և կքննադատեք նրան: Որպես կանոն, ծնողները նկատում են երեխաների միայն սխալ գործողությունները և շատ հաճախ քննադատում են նրանց: Բայց եթե երեխան ինչ-որ բան սխալ է արել, նշանակում է, որ նա որոշակի մոտիվացիա ուներ: Շատ ավելի լավ կլինի, եթե քննադատելու փոխարեն նրան գործելու ճիշտ ձևը ցույց տաք: Իհարկե, կան իրավիճակներ, երբ անհրաժեշտ է պահանջներ ներկայացնել և պատժել երեխային, բայց այդ ամենը շատ զգույշ պետք է անել և երբեք «չուռճացնել»:



15. **Սեռական դաստիարակությունը շատ կարևոր է:** Եթե կարծում եք, որ սեռական հարաբերությունների թեման միայն ավելի մեծ տարիքում են քննարկում, ապա սխալվում եք: Այս թեման շատ հետաքրքիր է ձեր երեխայի համար և, եթե լռեք, էլ ավելի մեծ հետաքրքրություն կառաջացնեք: Պետք է ձեր



երեխային բացատրեք տղամարդկանց և կանանց տարբերությունները, պատմեք, թե ինչպես են երեխաները ծնվում: Ձեր երեխան պետք է իմանա այս թեման «առաջին ձեռքից»:



16. Քայլերը շատ օգտակար է երեխաների համար: Այն խթանում է երեխայի գլխուղեղի գործունեությունը, բարելավում ֆիզիկական և հուզական վիճակը: Թող ձեր երեխան շատ քայլի:

17. Երաժշտական գործիքներ նվագելը զարգացնում է երեխայի կենտրոնանալու կարողությունը: Երաժշտության դասերին հաճախող երեխաները, որպես կանոն, կոկիկ և կարգապահ են: Կենտրոնանալու կարողությունը կօգնի նրանց ավելի արդյունավետ աշխատել ապագայում: Իհարկե, սա կօգնի նրանց նաև ուսման մեջ:



18. Դերային խաղերը խրախուսում են ստեղծագործականությունը: Երեխաները պաշտում են լինել ուշադրության կենտրոնում: Թող ձեր երեխան տարբեր դերեր խաղա: Դերային խաղերը կբարելավեն նրա բանավոր խոսքի հմտությունները, ինչը շատ կարևոր է:

19. Վաղ զարգացումը ձևավորում է առաջնորդության հմտություններ: Շատերը կարծում են, որ նման որակները պետք է զարգացնել ավելի ուշ տարիքում, բայց դա սխալ է: Որքան շուտ սկսեք զարգացնել ձեր երեխայի մեջ առաջնորդական որակները, այնքան ավելի լավ արդյունքների կհասնի նա ապագայում: Ընդգծեք նրա ձեռքբերումները. մեկ հաջողությունը խթանում է մյուսը:



20. Ստեղծագործականություն և հմտություններ: Հնարավորինս շուտ մատիտ տվեք ձեր երեխային: Ութ ամսական երեխան կարող է մատիտը բռնել, բայց եթե մատիտ տաք նրան և կողքին մի թուղթ դնեք՝ նա թղթի վրա չի նկարելու: Ամենայն հավանականությամբ, նա կտոր-կտոր կանի թուղթն ու կսկսի նկարել պատերին կամ սեղանին: Սա նրա ինքնարտահայտման ձևն է: Դուք պետք է ապահովեք այնպիսի պայմաններ, որպեսզի ձեր երեխան կարողանա նկարել այնտեղ, որտեղ ցանկանում է: Դրանով դուք խթանում եք նրա ստեղծագործական ունակությունների զարգացումը: Ստանդարտ չափի թուղթ և մոխրագույն մատիտ նվիրելը երեխային հեռացնում է





ստեղծագործականությունից: Երեխայի աշխարհայացքը տարբերվում է մեծահասակի աշխարհայացքից: Տվեք ձեր երեխային մեծ թուղթ և խնդրեք նրան նկարել այն, ինչ ուզում է:

21. **Մի գնեք երեխայի համար շատ խաղալիքներ:** Անհրաժեշտ չէ շատ խաղալիքներ գնել ձեր երեխայի համար, եթե ցանկանում եք, որ նա ստեղծագործ լինի: Չափից շատ խաղալիքները շեղում են նրա ուշադրությունը: Նրա համար շատ ավելի լավ



կլինի, եթե մի քանի խաղալիք ունենա և ձեր հետ միասին նոր խաղեր կամ խաղալիքներ հորինի: Երեխաները կարող են հին կաթսան վերածել վիշապի քարանձավի կամ արքայադստեր դղյակի: Ահա թե ինչու է պետք նրանց երևակայելու ազատություն տալ: Գնելիս ընտրեք այնպիսի խաղալիքներ, որոնք երեխան կարող է ինքնուրույն օգտագործել: Դրանով դուք կխթանեք նրա հետաքրքրությունը, ինչպես նաև հնարավորություն կտաք նրան՝ վայելելու իր հաջողությունը: Եթե կավ եք տալիս ութ ամսական երեխային, նա դժվար թե սկսի ծեփել, բայց նա կդիպչի դրան և կնկատի, որ այն կարող է փոխել իր ձևը, կամ նա կարող է նկատել, որ թուղթը կարող է ճմռթվել կամ պատռվել: Այն երեխաները, ովքեր վաղ մանկությունից փորձում են տարբեր նյութեր և հյուսվածքներ, ավելի զարգացած են, քան նրանք, ովքեր չեն փորձում:



22. **Խաղն ու աշխատանքը երեխաների համար հավասար են:** Մեծահասակների համար աշխատանքի ամենակարևոր մասը արդյունքն է, իսկ երեխաների համար ամենակարևորը ընթացքն է: Դուք պետք է խրախուսեք երեխային օգնել ձեզ կենցաղի հետ կապված հարցերում: Տնային պարտականությունները կատարելով երեխան սովորում է կենտրոնանալ գործընթացի վրա և պատասխանատու լինել իր գործողությունների համար:



23. Սխալ է խուսափել այն ամենից, ինչը կարող է վտանգավոր լինել երեխայի համար: Դուք փորձում եք ձեր երեխային պաշտպանել բոլոր վտանգներից, սակայն այդ վտանգները նրան սովորեցնում են, թե ինչը կարող է հաղթահարել, իսկ ինչը՝ ոչ: Ավելի լավ է նրան թույլ տաք դիպչել իր ուզած բոլոր իրերին, թող փորձի շատ տարբեր նյութեր և հյուսվածքներ: Սա կօգնի ձեր փոքրիկ հետազոտողին ավելին իմանալ շրջապատող աշխարհի մասին: Նա կարող է ծնողների հսկողության տակ ասեղ կամ մուրճ օգտագործել, այնուհետև նույնը կատարել ինքնուրույն:



24. Շատ կարևոր է մարզել երեխայի հիշողությունը: Երեք տարեկան հասակում երեխաները կարող են անգիր սովորել մոտ երկու հարյուր կարճ բանաստեղծություն: Նրանց ներուժը չի իրացվի, եթե նրանք չօգտագործեն իրենց անգիր սովորելու ունակությունները: Երեխան պետք է հաճույք ստանա իր գործողություններից, այնպես որ դուք պետք է միասին սովորեք այն բանաստեղծությունները, որոնք նրան դուր են եկել, և այս դեպքում՝ մի քանի կրկնությունն արդեն բավարար կլինի:




25. Երեխային շրջապատեք գեղեցկությամբ, որպեսզի սովորեցնեք նրան գնահատել այն: Անհրաժեշտ է հենց ծննդից սկսած երեխային շրջապատել գեղեցկությամբ: Թող նա լսի միայն լավ և որակյալ երաժշտություն, տեսնի մարդկության կողմից ստեղծված ամենագեղեցիկ նկարները: Արվեստի և գեղագիտության նկատմամբ սեր զարգացնելով՝ հնարավորություն եք տալիս ձեր երեխային ուսումնասիրել աշխարհը և տարբերակել, թե ինչն է լավ և ինչը՝ վատ:

26. Երեխաները ծնողների սեփականությունը չեն: Շատ հաճախ ծնողներն այսպես են մտածում. «Ես ուզում եմ, որ իմ աղջիկը դառնա երաժիշտ» կամ «Ես ուզում եմ, որ իմ որդին դառնա բժիշկ»: Բայց դրանք միայն ծնողների երազանքներն են: Երեխան անկախ մարդ է՝ իր կյանքի ուղին ընտրելու իրավունքով: Ծնողները պարզապես կարող են օգնել իրենց երեխային հասնել հաջողության:



27. Վաղ զարգացումը՝ երեխային մանկապարտեզին նախապատրաստելը չէ, և երեխային դաստիարակելիս պարտադիր չէ միշտ արգելքներ և սահմանափակումներ կիրառել: Դասերը պետք է հիմնված լինեն խաղի վրա: Այս

մեթոդը հարմար է բոլոր երեխաներին: Դուք պետք է ձեր երեխային դաստիարակեք սիրո և խնամքի մթնոլորտում: Դուք ձեր երեխայի ամենակարևոր ուսուցիչն եք և կարող եք նրան ավելին տալ, քան ամենաառաջատար պրոֆեսորը: Վաղ տարիքի զարգացումը կախված է այն մարդկանց ուշադրությունից և բարեխղճությունից, ովքեր շփվում են երեխայի հետ:



Եվ հիշեք՝ անհրաժեշտ է երեխային սովորեցնել վստահել այլ մարդկանց, և այդ կերպ կլինի համաշխարհային խաղաղություն:

